Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
օգոստոսի 26 -ի N 488 - Ա
որոշման

«ՁԵՌՔԻ ՀԱԿԱՄԱՆՐԷԱԿԱՆ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման նպատակով նախատեսվում է ձեռք բերել 500 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութ՝ 0,95 լ. տարողությամբ, պոմպով, պիտակի վրա «Միայն ՊԲ կարիքների համար» նշումով, որը անհատույց տրամադրվելու է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Հայաստան համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, բնագավառը՝ առողջապահություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 840,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 24-ից մինչև հոկտեմբերի 23-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է ծրագրի իրականացման ժամկետում գնել 500 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութ: Ժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 24-ից մինչև հոկտեմբերի 23-ը: Արժեքը՝ 840,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	500 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութերի ձեռքբերում՝ 840,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ